

Պատանիների համար նամակագրության միջազգային մրցույթի կանոնները

1. Նպատակը

Նամակագրության միջազգային մրցույթն ունի հետևյալ նպատակը. բարելավել գրագիտությունը նամակ գրելու արվեստի միջոցով: Ամենամյա կայանալիք երեխաների և պատանիների համար նախատեսված մրցույթը խրախուսում է մասնակիցներին արտահայտել իրենց ստեղծագործական հմտությունները և կատարելագործել լեզվական ունակությունները:

2. Մասնակցություն

Մրցույթին կարող են մասնակցել 9-15 տարեկան պատանիները:

ՀՓՄ Միջազգային բյուրոն չի ընդունի անմիջապես դպրոցների կամ մասնավոր անհատների ուղարկած շարադրությունները:

3. Մրցույթի կազմակերպումը և հաղթողների ընտրությունը

Մասնակից երկրներից յուրաքանչյուրը պետք է նամակագրության մրցույթ կազմակերպի իր տարածքում, նախընտրելի է՝ ազգային կրթական մարմինների աջակցությամբ:

Կազմակերպող մարմինը պետք է ընտրի լավագույն շարադրությունը՝ մրցույթի ընդհանուր կանոններին համաձայն:

Մասնակից անդամ յուրաքանչյուր երկիր իր լավագույն շարադրությունը անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի հետ միասին պետք է մինչև հաջորդ տարվա **մայիսի 5-ը** ուղարկի Միջազգային բյուրո: Յուրաքանչյուր երկիր կարող է ուղարկել միայն մեկ շարադրություն:

Յուրաքանչյուր հայտը պետք է ընդգրկի հետևյալ փաստաթղթերը.

ա) հայտի լրացված ձևը;

բ) Բնօրինակ նամակը հետևյալ ֆորմատներով.

- Ձեռքով գրված բնօրինակի (եթե առկա է) բարձր որակի տեսածրում (scan) PDF ֆորմատով; և
- MS Word ծրագրով վերարտադրված շարադրություն;

գ) Շարադրության թարգմանությունը անգլերեն և/կամ ֆրանսերեն լեզուներով, MS Word ծրագրով վերարտադրված,

դ) Թեկնածուի բարձրորակ լուսանկարը,

- JPEG ձևաչափով (առնվազն 300 dpi), կամ
- որպես տպված պատճե (խնդրում ենք չկպցնել կամ սոսնձել լուսանկարը որևէ փաստաթղթին փոստով ուղարկելու դեպքում):

4. Հայտերի ներկայացման կարգն ու բովանդակությունը

Բնօրինակ շարադրությունը կարող է ներառել նաև պատկերազարդումներ՝ կատարված թեկնածուի կողմից:

Հայտերը պետք է խստորեն պահպանեն թեման և չպետք է գերազանցեն բնօրինակի լեզվով 800 բառի սահմանը:

5. Ժյուրիի նշանակումն ու արդյունքների հրապարակումը

ՀՓՄ Միջազգային բյուրոն պատասխանատու ժյուրի կնշանակի՝ ընտրված նամակները գնահատելու համար:

Հաշվի են առնվելու հետևյալ չափանիշները՝

- նամակի կառուցվածքը,
- թեմայի պահպանումը,
- ստեղծագործական միտքը,
- լեզվի օգտագործումը:

Ժյուրին կընտրի լավագույն երեք հայտը (առաջին, երկրորդ և երրորդ տեղերը), և այն կարող է նաև առանձնացնել այլ շարադրություններ, որոնք կարժանանան հատուկ հիշատակության:

Ժյուրիից արդյունքներն ստանալուն պես Միջազգային բյուրոն ողջամիտ ժամանակահատվածում ծանուցում է մասնակից բոլոր երկրներին հաղթողների անունների վերաբերյալ:

6. Մրցանակներ

Լավագույն հաղթողները կստանան հատուկ մեդալ (ոսկի՝ առաջին տեղի համար, արծաթ՝ երկրորդ տեղի համար և բրոնզ՝ երրորդ տեղի համար), ինչպես նաև վկայական և այլ նվերներներ՝ նախատեսված ՀՓՄ-ի կողմից:

Ոսկե մեդալակիրին կարող է նաև Շվեյցարիայի՝ Բերնի ուղեգիր շնորհվի, որտեղ գտնվում է ՀՓՄ-ի գլխամասը, կամ այլ ալտերնատիվ մրցանակ, որը կորոշվի ՀՓՄ-ի կողմից:

Հատուկ հիշատակության արժանացած հեղինակները կստանան վկայական, ինչպես նաև ՀՓՄ-ի կողմից նախատեսված այլ մրցանակներ:

7. Հրապարակում

2022 թվականի հունվարի 13-ի թիվ 0901(DIRCAB .COMM)xxxx գրության
Հավելված 1 (ոչ պաշտոնական թարգմանություն)

ՀՓՄ Միջազգային բյուրոն հասարակայնության հետ կապերի ոլորտում միջոցառումներ կձեռնարկի՝ մրցանակակիրների, նրանց երկրների և առհասարակ նամակագրության մրցույթի հնարավորինս լայն գովազդումն ապահովելու նպատակով:

Մասնակից երկրները պետք է ձեռնարկեն անհրաժեշտ բոլոր քայլերը իրենց մոտ մրցույթն ու իրենց մրցանակակիրներին գովազդելու համար: